ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 23 (քսաներեք) հայտ՝

- Բյուրական արվեստի ակադեմիայի,
- «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի,
- «ՆԻԳՈՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի,
- «ԹՈՆԻՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՅՈՒՂ» ՍՊԸ-ի,
- «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի,
- «ՆՈՒՄԱ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
- «ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի,
- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
- «ԱՐՎԵՍՏ23» ՀԿ-ի,
- ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
- «ՀՅՈՒՍԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի,
- «ԱՐՎԵՍՏԱ» ՍՊԸ-ի,
- «ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի,
- «ՍԱՐՎՈՐ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ-ի,
- «Հայ դերասանների միություն» ՀԿ-ի,
- «ՋԻՀԷՅ» ՓԲԸ-ի,
- «ԻՍՏԵՅՏ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԴ ԱԴՄԻՆԻՍԹՐԵՅՇՆ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի,
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի,
- «ԳՐԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,
- «ՍՔԱՅԲՈԼ» ՍՊԸ-ի,
- «ԴԸ ՌԱՆՉ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով՝

➢ *թվով 16 (տասնվեց) կազմակերպության՝*

- Բյուրական արվեստի ակադեմիայի,
- «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի,
- «ՆԻԳՈՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի,
- «ԹՈՆԻՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՅՈՒՂ» ՍՊԸ-ի,
- «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի,
- «ՆՈՒՄԱ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
- «ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի,
- «ԱՐՎԵՍՏ23» ՀԿ-ի,
- ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
- «ԱՐՎԵՍՏԱ» ՍՊԸ-ի,
- «ՍԱՐՎՈՐ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ-ի,
- «Հայ դերասանների միություն» ՀԿ-ի,
- «ԻՍՏԵՅՏ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԴ ԱԴՄԻՆԻՍԹՐԵՅՇՆ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի,
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի,
- «ԴԸ ՌԱՆՉ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.4 կետի պահանջներին:

Մասնավորապես՝

- Բյուրական արվեստի ակադեմիայի կողմից ներկայացված հայտը ամբողջովին ներբեռնված չէ,
- «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է գրանցման վկայականը, կազմակերպության որոշումը և փորձի նկարագրությունը,
- «ՆԻԳՈՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում որոշ փաստաթղթեր ստորագրված չեն,
- «ԹՈՆԻՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՅՈՒՂ» և «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-րի կողմից ներկայացված հայտերում բացակայում է փորձի նկարագրությունը և միջոցառման ծրագիրը,
- «ՆՈՒՄԱ» ՍՊԸ-ի, «ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի, «ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի և «ԴԸ ՌԱՆՉ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի տեխնիկական չափորոշիչներ բաժնում չի ներկայացված միջոցառման ծրագրի մանրամասն նկարագիրը,
- «ԱՐՎԵՍՏ23» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը չունի զբոսաշրջային ուղղվածություն,
- ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական չափորոշիչներ բաժնում ներբեռնված որոշ փաստաթղթեր չեն բացվում,
- «ԱՐՎԵՍՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է կազմակերպության փորձի և ծրագրի մանրամասն նկարագրությունը,
- «ՍԱՐՎՈՐ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է կազմակերպության ծրագրի մանրամասն նկարագրությունը, իսկ ծրագրի առաջարկը և ժամանակացույցը ստորագրված չեն,
- «Հայ դերասանների միություն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է գրանցման վկայականը, միջոցառման ծրագիրը և ֆինանսական մասերը ստորագրված չեն, ֆինանսական հավելվածում աշխատավարձ է նշված,
- «ԻՍՏԵՅՏ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԴ ԱԴՄԻՆԻՍԹՐԵՅՇՆ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ներբեռնված որոշ փաստաթղթեր ստորագրված չեն,
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական չափորոշիչներ բաժնում բացակայում է ֆինանսական նախահաշիվը, ինչպես նաև կազմակերպության կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը ձևակերպվել է որպես «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ, սակայն գրանցման վկայականում ներկայացված է որպես «Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ» ՊՈԱԿ:

➢ *Թվով 2 (երկու) կազմակերպության՝*

- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
- «ԳՐԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.3 կետի պահանջներին:

Մասնավորապես՝

- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում չի ներկայացվել 2-րդ ենթակետի անհրաժեշտ պահանջները բավարարող փաստարկ, համաձայն որի կազմակերպությունը պետք է ներկայանա սոցիալական կայքերում և/ կամ ունենա կայք, ինչպես նաև բացակայում է հրավերով պահանջվող մասնագետի՝ գրաֆիկ դիզայների առկայությունը: Միաժամանակ ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի 2.4.1. կետի պահանջներին:

• «ԳՐԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չունի փառատոնների, կորպորտիվ միջոցառումների, համերգների և/կամ նմանատիպ միջոցառումների կազմակերպման առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ:

➢ *Թվով 5 (հինգ) կազմակերպության՝*

• «ՀՅՈՒՍԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի,
• «ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի,
• «ՋԻՀԷՅ» ՓԲԸ-ի,
• ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
• «ՍՔԱՅԲՈԼ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 18 (18) կազմակերպության՝

• Բյուրական արվեստի ակադեմիայի,
• «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի,
• «ՆԻԳՈՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի,
• «ԹՈՆԻՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՅՈՒՂ» ՍՊԸ-ի,
• «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի,
• «ՆՈՒՄԱ» ՍՊԸ-ի,
• «ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
• «ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ի,
• «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
• «ԱՐՎԵՍՏ23» ՀԿ-ի,
• ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի,
• «ԱՐՎԵՍՏԱ» ՍՊԸ-ի,
• «ՍԱՐՎՈՐ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ-ի,
• «Հայ դերասանների միություն» ՀԿ-ի,
• «ԻՍՏԵՅՏ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԴ ԱԴՄԻՆԻՍԹՐԵՅՇՆ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի,
• «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի,
• «ԳՐԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,
• «ԴԸ ՌԱՆՉ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 5 (հինգ) կազմակերպություն՝

• «ՀՅՈՒՍԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ն՝ Շիրակի մարզի Ամասիա համայնքում «-46^{0}C ձմեռային փառատոն»-ի կազմակերպման համար,

• «ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ն՝ Երևան քաղաքում «Տարազ-ֆեստ» փառատոնի կազմակերպման համար,

• «ՋԻՀԷՅ» ՓԲԸ-ն՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում «Դիլիջանի գինու փառատոն»-ի կազմակերպման համար,

• «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ը՝ Լոռու մարզի Տաշիր համայնքում «Արմենիա Էյր Ֆեստ» 2024 փառատոնի կազմակերպման համար,

• «ԱՔԱՅԲՈԼ» ՍՊԸ-ն՝ Երևանում, Կոտայքի մարզի Գառնի համայնքում և Արագածոտնի մարզի Ապարանի ջրամբարի տարածքում «Օդագնացության միջազգային փառատոն»-ի կազմակերպման համար:

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար՝

• **«ՀՅՈՒՍԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ**-ի հետ Շիրակի մարզի Ամասիա համայնքում «-46^{0}C ձմեռային փառատոն»-ի կազմակերպման համար՝ 4.848.000 (չորս միլիոն ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

• **«ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ**-ի հետ Երևան քաղաքում «Տարազ-ֆեստ» փառատոնի կազմակերպման համար՝ 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, պահանջելով լրացուցիչ ներկայացնել Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցառման անցկացման վերաբերյալ համաձայնության տեղեկանք, չնայած այն հանգամանքին, որ փառատոնը անցկացվելու է մասնավոր տարածքում (տարածքի սեփականատիրոջ համաձայնությունը ներկայացված է),

• **«ՋԻՀԷՅ» ՓԲԸ**-ի հետ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում «Դիլիջանի գինու փառատոն»-ի կազմակերպման համար՝ 20.733.000 (քսան միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

• **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**-ի հետ Լոռու մարզի Տաշիր համայնքում «Արմենիա Էյր Ֆեստ» 2024 փառատոնի կազմակերպման համար՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,

• **«ԱՔԱՅԲՈԼ» ՍՊԸ**-ի հետ Երևանում, Կոտայքի մարզի Գառնի համայնքում և Արագածոտնի մարզի Ապարանի ջրամբարի տարածքում «Օդագնացության միջազգային փառատոն»-ի կազմակերպման համար՝ 24.950.000 (քսանչորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Լ.Աշոտյան -

Մ.Հակոբյան -

Շ.Հովսեփյան -